ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Հունաստանի Հանրապետության կառավարության միջև տնտեսական, արդյունաբերական և տեխնոլոգիական համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Հունաստանի Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,

ցանկանալով խթանել իրենց միջև տնտեսական, արդյունաբերական և տեխնոլոգիական համագործակցության զարգացումը հավասարության և փոխշահավետության հիման վրա,

ընդունելով իրենց միջև համագործակցության հաջող զարգացման համար երկարաժամկետ միջոցառումների կարևորությունը,

նշելով, որ Հայաստանի Հանրապետության տնտեսական կառուցվածքներում ու մեխանիզմներում կատարվող կարևոր փոփոխությունները նոր հեռանկարներ են բացում և կարող են նպաստել երկու Կողմերի միջև տարբեր մակարդակներով կապերի ու համագործակցության ամրապնդմանը՝ ներառյալ տնտեսավարող սուբյեկտների միջև փոխադարձ ուղղակի կապերը,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

1. Պայմանավորվող կողմերը, իրենց համապատասխան օրենքների և կանոնակարգերի շրջանակներում և հաշվի առնելով իրենց միջազգային պարտավորությունները, բոլոր ջանքերը կգործադրեն փոխադարձ հետաքրքրություն և փոխշահավետություն ներկայացնող բոլոր ոլորտներում տնտեսական, արդյունաբերական և տեխնոլոգիական համագործակցությունը ավելի զարգացնելու և ամրապնդելու համար:

2. Այդ համագործակցությունը ուղղված է, մասնավորապես.

- Պայմանավորվող կողմերի միջև տնտեսական կապերն ամրապնդելուն և բազմազան դարձնելուն,
- նոր շուկաների բացմանը,
- տնտեսավարող սուբյեկտների միջև համագործակցության խրախուսմանը, որի նպատակն է խթանել ներդրումները, համատեղ ձեռնարկությունների ստեղծումը, լիցենզիոն համաձայնագրերի կնքումը և նրանց միջև համագործակցության մյուս ձևերը:

Հոդված 2

1. 1-ին հոդվածում նշված համագործակցությունը տարածվում է, մասնավորապես, հետևյալ բնագավառների վրա.

- արդյունաբերություն,
- գյուղատնտեսություն, ներառյալ ագրոարդյունաբերությունը,
- շինարարություն և բնակարանաշինություն,
- տրանսպորտ, ներառյալ ցամաքային և ծովային տրանսպորտը,
- կապ,
- բանկային, ապահովագրական և ֆինանսական այլ ծառայություններ,
- զբոսաշրջություն,
- սոցիալական համագործակցություն,
- փոքր և միջին ձեռնարկություններ,
- ապրանքների շարժ և բաշխում:

2. Պայմանավորվող կողմերը պետք է խորհրդակցեն, որպեսզի ճշգրտեն իրենց համագործակցության առաջնահերթ ճյուղերը, ինչպես նաև տնտեսական, արդյունաբերական և տեխնոլոգիական համագործակցության նոր բնագավառները:

Հոդված 3

1. Սույն Համաձայնագրում նշված տնտեսական ու արդյունաբերական համագործակցությունը իրագործվում է գլխավորապես հայկական և հունական ձեռնարկությունների, կազմակերպությունների ու ֆիրմաների միջև կնքված պայմանագրերի և համաձայնագրերի հիման վրա՝ Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի օրենսդրությանը համապատասխան:

2. Պայմանավորվող կողմերը գործադրում են բոլոր ջանքերը, որպեսզի հեշտացնեն այս գործողությունը՝ բարենպաստ պայմաններ ստեղծելով տնտեսական և արդյունաբերական համագործակցության համար, մասնավորապես.

- նպաստավոր մթնոլորտ զարգացնելով կապիտալ ներդրումների համար,
- հեշտացնելով առևտրական և տնտեսական տեղեկության փոխանակությունը,
- աջակցելով իրենց ձեռնարկությունների միջև փոխանակումներին և կապերին,
- օժանդակելով տոնավաճառների, ցուցահանդեսների, գիտաժողովների կազմակերպմանը և այլն,
- ծավալելով գործունեություն առևտրի զարգացման նպատակով:

Հոդված 4

Պայմանավորվող կողմերը, իրենց ազգային առաջնայնություններին և օրենսդրությանը համապատասխան,

բարենպաստ պայմաններ կստեղծեն իրենց, ինչպես նաև իրենց համապատասխան կազմակերպությունների կամ ֆիրմաների միջև տեխնոլոգիական համագործակցության համար:

Այդ համագործակցությունը, ի թիվս այլոց, կարող է ունենալ հետևյալ ձևերը.

- ընդհանուր հետազոտական ծրագրերի մշակում,
- մասնագիտացված պատվիրակությունների այցելությունների և ուսումնական շրջագայությունների կազմակերպում,
- փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բնագավառներում վերապատրաստման ծրագրերի մշակում,
- տեխնիկական և գիտական փորձաքննության տրամադրում,
- գիտաժողովների և հանդիպումների կազմակերպում,
- փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող վերապատրաստման ծրագրերի կազմակերպում:

Հոդված 5

1. Սույն Համաձայնագրի իրականացումն ապահովելու նպատակով կստեղծվի Համատեղ կոմիտե:

2. Համատեղ կոմիտեն կկազմվի Պայմանավորվող կողմերի ներկայացուցիչներից և կգումարվի Կողմերից յուրաքանչյուրի խնդրանքով՝ փոխադարձ համաձայնությամբ որոշված վայրում և ժամանակ:

3. Համատեղ կոմիտեն կստուգի սույն Համաձայնագրի նպատակների իրականացման ուղղությամբ ձեռք բերված առաջընթացը և անհրաժեշտության դեպքում հանձնարարականներ կձևակերպի դրանց իրականացման համար:

Հոդված 6

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի ժամանակավորապես՝ ստորագրման օրից, և վերջնականապես՝ այն օրվան հաջորդող երկրորդ ամսվա առաջին օրը, երբ Պայմանավորվող կողմերը միմյանց կծանուցեն անհրաժեշտ իրավական ընթացակարգերի ավարտման մասին:

2. Սույն Համաձայնագիրը կնքվում է սկզբնապես 5 տարի ժամկետով, և եթե Պայմանավորվող կողմերից որևէ մեկը սույն Համաձայնագրի գործողության ժամկետի ավարտից առնվազն 6 ամիս

առաջ մյուս Կողմին չծանուցի սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր ցանկության մասին, ապա սույն Համաձայնագիրն ինքնաբերաբար կերկարաձգվի 10 տարով: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրավունք ունի դադարեցնելու Համաձայնագիրը՝ ընթացիկ գործողության ժամկետի ավարտից առնվազն վեց ամիս առաջ ծանուցում ուղարկելով:

Կատարված է Աթենք քաղաքում 1992 թվականի հունվարի 20-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հունարեն, հայերեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Մեկնաբանման ժամանակ տարաձայնություններ առաջանալու դեպքում հիմք կընդունվի անգլերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է 1996 թվականի հունիսի 1-ից: